ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի և «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ի միջև համագործակցության մասին

Երևան **« 19 » դեկտեմբերի 2025թ.**

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջը՝ ի դեմս քոլեջի տնօրեն Ռոմիկ Սարգսյանի, մի կողմից, և **«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ի**՝ ի դեմս տնօրեն Նիկողոս Գասպարյանի, մյուս կողմից՝ այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն հուշագիրը հետևյալի վերաբերյալ.

1. Հուշագրի նպատակը

Սույն հուշագիրը միտված է միջին մասնագիտական կրթության, հետազոտական աշխատանքների, համատեղ նախագծերի իրականացման, դասախոսական կազմի և ուսանողների փորձի փոխանակման համագործակցության հիմքեր ստեղծելուն:

2. Հուշագրի առարկան և Կրթության որակի ապահովումը

Սույն հուշագրի առարկան կողմերի համագործակցությունն է ներքոնշյալ կետերի շուրջ.

2.1. Ինստիտուցիոնալ հավատարմագրում և բենչմարքինգ.

- Իրականացնել համատեղ բենչմարքինգային ուսումնասիրություններ և փորձի փոխանակում՝ ուղղված կրթական գործընթացների արդյունավետության գնահատմանը:
- Իրականացնել երկկողմ խորհրդատվություններ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության պատրաստման փուլում՝ հիմնվելով հավատարմագրման պետական չափանիշների վրա:
- Աջակցել կողմերի որակի ապահովման պատասխանատու ստորաբաժանումների միջև կապերի հաստատմանը:

2.2. Դասախոսական և ուսանողական անձնակազմի զարգացում.

- Աջակցել դասախոսների դասավանդման կարողությունների բարձրացմանը, կազմակերպել համատեղ գիտական աշխատաժողովներ և սեմինարներ:
- Ապահովել ուսանողների փոխանակման գործընթացը և երկկողմ ճանաչողական այցերի պլանավորումը:
- Մշակել մեխանիզմներ ուսանողների ներգրավվածությունը որակի կառավարման գործընթացներում մեծացնելու համար:

2.3. Գիտական և գործնական համագործակցություն.

- Միջազգային և տեղական գիտական կոնֆերանսների, ծրագրերի համատեղ կազմակերպում և հոդվածների հրատարակում:
- Հնարավորությունների սահմաններում համատեղ մասնագիտական պրակտիկայի կազմակերպում բժշկական հաստատությունների հենքի վրա:

- Համագործակցել ռեսուրսների և ենթակառուցվածքների (գրադարան, լաբորատորիաներ) համատեղ օգտագործման հարցում:

3. Հուշագրի ժամկետը

Սույն հուշագիրը կնքվում է **5 (հինգ) տարի** ժամկետով:

4. Ամփոփիչ դրույթներ

4.1. Բոլոր փոփոխություններն ու լրացումները պահանջում են գրավոր համաձայնություն և կազմում են հուշագրի անբաժանելի մասը:

4.2. Հուշագրի դադարեցումը կարող է նախաձեռնել կողմերից յուրաքանչյուրը՝ գրավոր ծանուցելով առնվազն 3 ամիս առաջ:

4.3. Սույն հուշագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

5. Կողմերի իրավաբանական հասցեները

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջ	**«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ**
ք. Երևան, Գյուրջյան 10	Ք.Վարդենիս, Վ. Համբարձումյան 19
Հեռ: +374 94434206	Հեռ: +374 77261201
Էլ. փոստ: sglmedcollege@gmail.com	Էլ. փոստ: vardenisi-bhq@rambler.ru
Տնօրեն՝ _____Ռ.Սարգսյան	**Տնօրեն՝** _____Հ.Գասպարյան
« 19 » 12. 2025թ.	« 19 » 12. 2025թ.